ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 1.

Համայնքի ավագանուն՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունները

ՄՈԴՈՒԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տեսական և գործնական ուսուցման միջոցով՝

- **զարգացնել ունկնդիրների գիտելիքները ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի մասին,**
- **բարձրացնել ավագանու անդամի իրավունքների և պարտականությունների իմացության մակարդակը,**
- **ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների մասին իրազեկվածության շրջանակը,**
- **աջակցել համայնքային խնդիրների լուծմանը ակտիվ ներգրավվածություն ունենալու կարողությունների կատարելագործմանը,**
- **նպաստել ավագանու նիստերին, հանձնաժողովների և խմբակցությունների աշխատանքներին արդյունավետ մասնակցելու հմտությունների ձևավորմանը,**
- **խթանել ավագանու անդամի լիդերության գործոնի արժևորման գիտակցումը:**

ՄՈԴՈՒԼԻ ԹԵՄԱՆԵՐԸ

ԹԵՄԱ 1.

Տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմունքները

ԹԵՄԱ 2.

Տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր նկարագիրը և լիազորությունները

ՄՈԴՈՒԼԻ ԹԵՄԱՆԵՐԸ

ԹԵՄԱ 3.

Ավագանու մշտական հանձնաժողովների ձևավորման և գործունեության առանձնահատկությունները

ԹԵՄԱ 4.

Ավագանու խմբակցությունների ձևավորման և գործունեության առանձնահատկությունները

ՄՈԴՈՒԼԻ ԹԵՄԱՆԵՐԸ

ԹԵՄԱ 5.

Ավագանու անդամի իրավունքները և պարտականությունները

ԹԵՄԱ 6.

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման իրավական հիմքերը և մեխանիզմները

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնք	Մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն, վարչատարածքային միավոր
Տեղական ինքնակառավարում	Համայնքային նշանակության հանրային հարցերը լուծելու տեղական ինքնակառավարման մարմինների իրավունք և կարողություն
Համայնքի ավագանի	Համայնքի ներկայացուցչական մարմին
Համայնքի ղեկավար	Համայնքի գործադիր մարմին

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի ավագանու անդամ	Համայնքային քաղաքական պաշտոն
Համայնքապետարանի աշխատակազմ	Համայնքային կառավարչական հիմնարկ
Համայնքի բնակիչ	Համայնքի բնակչության ռեգիստրում հաշվառված անձ
Բնակիչների մասնակցություն	Տեղեկացվածություն ՏԻՄ-երի գործունեության մասին և ազդեցություն ՏԻՄ-երի կողմից ընդունվող որոշումների վրա

Թեմա 1. Տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմունքները

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՈՒՆՎԵԼ Է՝ 05.07.1995 թ.
ՓՈՓՈԽՎԵԼ Է՝ 2005 թ. 2015 թ.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ	
ՀՈԴՎԱԾ 2	Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:
ՀՈԴՎԱԾ 6	Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
ՀՈԴՎԱԾ 9	Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԳԼՈՒԽ 9

ՀՈԴՎԱԾ 179	Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների **իրավունքն ու կարողությունն է՝** համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու **համայնքային նշանակության հանրային հարցերը:** ..... Տեղական ինքնակառավարումն իրականացվում է **համայնքներում:**
ՀՈԴՎԱԾ 180	Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների **հանրություն է:** Համայնքը հանրային իրավունքի **իրավաբանական անձ է:**

ՀՈԴՎԱԾ 181	Տեղական ինքնակառավարման մարմիններն են **համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը:** …… Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել **համայնքի ղեկավարի** **ուղղակի կամ անուղղակի ընտրություն:**
ՀՈԴՎԱԾ 182	Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են **սեփական** և **պետության կողմից պատվիրակված:**

ՀՈԴՎԱԾ 183	Համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը **տեղական հանրաքվեով լուծելու միջոցով**: …… Համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու այլ եղանակները սահմանվում են օրենքով:

ՀՈԴՎԱԾ 184 185 186	• Համայնքն ունի **հողի,** ինչպես նաև **այլ գույքի** նկատմամբ **սեփականության իրավունք:** • Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով **տնօրինում է համայնքի սեփականությունը:** • Համայնքն ունի **բյուջե**, որը համայնքի ղեկավարի ներկայացմամբ **ընդունում է համայնքի ավագանին:** • Համայնքի ավագանին օրենքով սահմանված դրույքաչափերի շրջանակներում սահմանում է **տեղական հարկեր և տուրքեր,** ինչպես նաև կարող է համայնքի մատուցած ծառայությունների համար սահմանել **վճարներ:** • Համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանվում են հարկային և ոչ հարկային աղբյուրներ: • Համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները **ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:** **Պետությունն** իր հնարավորությունների շրջանակներում **միջոցներ է հատկացնում** համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:

ՀՈԴՎԱԾ 188	Տեղական ինքնակառավարման մարմինների **սեփական լիազորությունների** իրականացման նկատմամբ կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է **իրավական հսկողություն:** …… **Պետության կողմից պատվիրակված լիազորությունների** իրականացման նկատմամբ կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են **իրավական և մասնագիտական հսկողություն:**

ՀՈԴՎԱԾ 189 **190**	• Տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են **ստեղծել միջհամայնքային միավորումներ:** • Միջհամայնքային միավորումը **կարող է իրականացնել միայն այնպիսի լիազորություններ,** որոնք նրան վերապահված են **օրենքով կամ համայնքների ավագանիների որոշումներով:** • Միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի **իրավաբանական անձ է:** • Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով **միավորվել կամ բաժանվել:** Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս **պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը:**

Կարևոր է հիշել, որ ...

1985 թ. հոկտեմբերի 15-ին
Ստրասբուրգում ԵԽ-ն ընդունել է

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ:

Խարտիան տեղական և տարածաշրջանային իշխանությունների
իրավունքների պաշտպանության հիմնական համաձայնագիրն է,
որի իրականացումը պարտադիր է ԵԽ անդամ պետությունների կողմից:
.....
Հայաստանի Հանրապետությունը Խարտիան վավերացրել է
01.05.2002 թ.:
Դրանով Հայաստանը ճանաչել և իրականացնում է
Խարտիայի սկզբունքները և իրավակարգավորումները:

Հետաքրքիր է իմանալ, որ ...

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԸ

եզակի կառույց է, որը պատասխանատու է ԵԽ անդամ պետություններում տեղական և տարածաշրջանային ժողովրդավարության վիճակի գնահատման համար:
Մոնիտորինգային գործունեության միջոցով Կոնգրեսն ապահովում է, որ ճշգրտորեն կիրառվի

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ

ու պաշտպանվի տեղական և տարածաշրջանային ինքնակառավարման առողջ վիճակը:

Թեմա 2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր նկարագիրը և լիազորությունները

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ	
ԸՆԴՈՒՆՎԵԼ Է	07.05.2002 թ.
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ Է	• Տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները • Տեղական ինքնակառավարման մարմինները • Համայնքի պարտադիր խնդիրները • Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները • Տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում • Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ԵՆ

համայնքի ավագանին
և
համայնքի ղեկավարը,

որոնք ընտրվում են **հինգ տարի** ժամկետով:

***

Ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել է Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի **առնվազն երկու երրորդը**:

***

Համայնքի ավագանին համայնքի **ներկայացուցչական մարմինն է** և իրականացնում է Սահմանադրությամբ ու օրենքներով նախատեսված լիազորություններ:

***

Համայնքի ղեկավարը համայնքի **գործադիր մարմինն է**, ներկայացնում է համայնքը և իրականացնում Սահմանադրությամբ ու օրենքներով նախատեսված լիազորություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	
ՊԱՐՏԱԴԻՐ	**ԿԱՄԱՎՈՐ**
Համայնքի **պարտադիր խնդիրները** հանրային նշանակության այն խնդիրներն են, որոնց լուծմամբ ապահովվում է համայնքի **բնականոն կյանքի ընթացքը**	Համայնքի **կամավոր խնդիրներն** այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքը ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, **հավելյալ ֆինանսական միջոցների առկայության** դեպքում
Համայնքի պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունները **սահմանվում են օրենքով**	Համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և իրականացման կարգը սահմանվում են **ավագանու որոշմամբ**

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՍԵՓԱԿԱՆ	ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ
Համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով	Պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր,

որոնք ենթակա են կատարման համայնքի տարածքում:

Համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները, իրականացնում է համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌՋԵՎ

Տեղական ինքնակառավարման քաղաքականությունն արտահայտվում է

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում,

Միջնաժամկետ ծախսերի ծրագրում,

Տարեկան աշխատանքային պլանում,

Բյուջեում

և այլ ռազմավարական փաստաթղթերում:

Կարևոր է հիշել, որ ...

Տեղական ինքնակառավարման մարմինների
առաջին ընտրությունները
տեղի են ունեցել

1996 թվականի

նոյեմբերի 10-ին:

Հետաքրքիր է իմանալ, որ ...

1995 թվականի Սահմանադրության համաձայն՝ ավագանին ընտրվում էր

3 տարի ժամկետով:

****

2005 թվականի Սահմանադրության փոփոխությունների համաձայն՝ համայնքի ավագանին ընտրվում էր

4 տարի ժամկետով:

****

2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների համաձայն՝ ավագանու ընտրության

ժամկետը սահմանվեց 5 տարի:

ՀՀ ընտրական օրենսգրքի
(2016 թվականի սահմանադրական օրենք) համաձայն՝
ընտրողների քանակից ելնելով՝ համայնքի ավագանին կարող էր
ունենալ
հինգից երեսուներեք անդամ:

Ընտրական օրենսգրքի 2020 թվականի փոփոխությունների
համաձայն՝ ավագանին կարող է ունենալ
հինգից վաթսունհինգ անդամ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՐԳԸ	
1996 թվականի ավագանու առաջին ընտրություններից սկսած՝ համայնքներում ՏԻՄ-երն ընտրվում էին **մեծամասնական ընտրակարգով** (բացառությամբ Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքների):	**ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 2020 թվականի փոփոխությունների համաձայն՝** **4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում համայնքի ավագանու ընտրություններն անցկացվում են** **համամասնական ընտրակարգով:**
2015 թվականի Սահմանադրության փոփոխություններով նախատեսվեց համայնքի ղեկավարի **անուղղակի ընտրության հնարավորություն:**	

ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

2015-2022 թվականների ընթացքում ՀՀ-ում իրականացվեցին վարչատարածքային բարեփոխումներ՝ 6 փուլով:

***

2015թ. իրականացվեց վարչատարածքային բարեփոխումների 1-ին փուլը, և միավորման արդյունքում համայնքների թիվը 915-ից դարձավ 896:

***

2016, 2017, 2020, 2021, 2022 թվականների վարչատարածքային բարեփոխումների արդյունքում

համայնքների թիվը դարձավ 71:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- ընդհանուր իրավասությունը՝ համայնքային շահերին վերաբերող, ցանկացած գործունեության իրականացման իրավունքն է, եթե օրենքով այլ մարմինների դրանք վերապահված չեն.
- տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով.
- պետական մարմինների լիազորությունների փոխանցումը տեղական ինքնակառավարման մարմիններին, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում.
- համայնքի իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանությունը.
- տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ամբողջականությունն ու բացառիկությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացմանը միջամտության դեպքերն ու կարգը սահմանվում են միայն օրենքով.

- համայնքների սահմանների փոփոխությունների իրականացումն օրենքով սահմանված կարգով՝ հանրային շահերից ելնելով, լսելով համայնքի կարծիքը.
- տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այլ համայնքների հետ համագործակցելը և միջհամայնքային միավորումներ ստեղծելը.
- տեղական ինքնակառավարման մարմինների ներքին կառուցվածքների համապատասխանեցումը համայնքային խնդիրների լուծմանը.
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության համաչափությունը.
- տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանությունը.
- համայնքների բյուջեների ինքնուրույնությունը՝ տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու և սեփական պատասխանատվությամբ այն տնօրինելու հնարավորությունն է.
- համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման նպատակով ֆինանսական համահարթեցման միջոցով աջակցությունը.
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը.
- տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- համայնքի կայուն զարգացումը.
- գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.
- համայնքի գույքի կառավարումը.
- նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.
- համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.
- համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը.
- համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.
- համայնքում բնակարանային շինարարության խթանումը.
- համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.
- համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.

- պետության պաշտպանության իրականացման աջակցումը.
- աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.
- համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.
- համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը, ներառյալ՝ համայնքում էկոլոգիական կրթության և դաստիարակության խթանումը.
- համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը.
- համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.
- համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը.
- համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.
- համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը.
- բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

- Ավագանին իր գործունեությունը կազմակերպում է ավագանու անդամների, ավագանու խմբակցությունների, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

- Ավագանու աշխատանքի հիմնական ձևը ավագանու հերթական և արտահերթ նիստերն են, որոնք անցկացվում են դռնբաց: Ավագանու որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ նիստեր: Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված՝ կարող են հրավիրվել ավագանու հեռավար եղանակով նիստեր: Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

- Ավագանու հիմնական գործունեությունը իրավաստեղծ գործունեությունն է: Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ: Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասություններից դուրս հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված Համայնքի բնակչությանը, Համայնքի ղեկավարին, մարզպետին, պետական կամ այլ մարմինների և կազմակերպությունների:

- Համայնքի ղեկավարն ավագանու նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ավագանու՝ օրենքով և իր կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

<u>ԿԱՆՈՆԱԿԱՐԳ,</u>

ՈՐՈՎ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ։

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

սահմանվում է

որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության,

տեղեկացվում են

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին

և կարող են

ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ

տեղական ինքնակառավարման մարմինների

որոշումների վրա:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունի համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով քննարկում և ընդունում է՝

- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը.
- Հանրային բաց լսումների և/կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը.
- Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան՝

մեկ տոկոսը՝ 10 000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում,

երկու տոկոսը՝ 1000-ից մինչև 10 000 բնակիչ ունեցող համայնքներում,

չորս տոկոսը՝ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներում:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ



ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԼԻՆԵԼ

- Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնություն ցուցաբերած համայնքի բնակիչների նախաձեռնող խմբի ներկայացուցչին համայնքապետարանի աշխատակազմը կամայականորեն մերժում է տրամադրել ստորագրահավաքի ձևաթուղթը, չի ցուցաբերում համապատասխան աջակցություն:

- Բնակիչների նախաձեռնության ստորագրահավաքի սահմանված կարգով լրացված փաստաթղթերի փաթեթը համայնքի ղեկավարին ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում առանց հիմնավոր պատճառի չի ընդգրկվում ավագանու նիստի օրակարգի նախագծում և չի ներկայացվում ավագանու քննարկմանը:

- Համայնքի ՀՀԶԾ-ի, բյուջեի, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին նախագծերի քննարկման համար հանրային լսումների հրավերը չի հրապարակվում լսումներից առվազն 15 օր առաջ, բնակիչները պատշաճ կարգով չեն իրազեկվում:

- Համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ հանրային հարցումների, քննարկումների, լսումների ժամանակ բնակիչների ներկայացրած կարծիքները, առաջարկությունները, առարկությունները պատշաճ կարգով չեն հավաքվում, գրառվում, սահմանված կարգով չի կազմվում ամփոփաթերթ՝ ավագանու քննարկմանը ներկայացնելու և համապատասխան որոշումներ կայացնելու ժամանակ բնակիչների կարծիքը հաշվի առնելու համար:
- Բնակիչների կողմից համայնքի ղեկավարին կոլեկտիվ հանրագիր ներկայացնելուց հետո սահմանված կարգով այն չի հրապարակվում, կամայականորեն հանրագիրը չի քննարկվում և մեկամսյա ժամկետում չի ներկայացվում պատասխան:

Թեմա 3. Ավագանու մշտական հանձնաժողովների ձևավորման և գործունեության առանձնահատկությունները

Ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, ստեղծում է մշտական, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:

Նորընտիր ավագանու մշտական հանձնաժողովները ստեղծվում են տվյալ գումարման ավագանու լիազորությունների ժամկետի համար և հանդիսանում են նրա կառուցվածքի մասը:

Համայնքի ղեկավարը մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմերը հաստատելու մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը:

Մշտական հանձնաժողովները ստեղծվում են ավագանու իրավասության մեջ մտնող հարցերի քննարկման և նախապատրաստման, իրավաստեղծ աշխատանք իրականացնելու, ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող որոշումների նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման, դրանց վերաբերյալ ավագանուն եզրակացություններ, կարծիքներ տալու, ինչպես նաև ավագանու ընդունած որոշումների կատարման նկատմամբ հսկողություն կազմակերպելու նպատակով:

Մշտական հանձնաժողովների թիվը որոշում է ավագանին՝ հաշվի առնելով նրա գործունեության հիմնական ուղղությունները: Ավագանին կարող է ստեղծել 3-5 մշտական հանձնաժողովներ: Հանձնաժողովների անդամների քանակական կազմը որոշելիս հիմք է ընդունվում ավագանու անդամների թիվը՝ այն հաշվարկով, որ ավագանու յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունենա ընդգրկվելու որևէ մշտական հանձնաժողովի կազմում:

Կարող են լինել զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական հարցերի, քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի, կրթության, մշակույթի, սպորտի, սոցիալական հարցերի, համայնքային կազմակերպություններին և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի և իրավական այլ հարցերի մշտական հանձնաժողովներ:

- Անհրաժեշտության դեպքում ավագանին կարող է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կազմը, խնդիրները, լիազորությունների շրջանակը, ժամկետները և աշխատակարգը սահմանվում են ավագանու որոշմամբ:
- Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են տեղական ինքնակառավարման ոլորտի առանձին հարցերի նախնական քննարկման կամ որոշակի խնդիրների, իրադարձությունների, փաստերի մասին ավագանուն եզրակացություններ, տեղեկանքներ, կարծիքներ, վերլուծություններ ներկայացնելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- **Մշտական հանձնաժողովների լիազորություններն ու գործունեության կարգը սահմանվում են ավագանու կանոնակարգով և հանձնաժողովների կողմից ընդունվող աշխատակարգերով:**

- **Մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին ավագանու որոշման ընդունումից հետո գումարվում են հանձնաժողովների առաջին նիստերը, որոնց ժամանակ հանձնաժողովների կազմերից ընտրվում են հանձնաժողովների նախագահներն ու քարտուղարները և ընդունվում են հանձնաժողովների աշխատակարգերը:**

- **Ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես քննարկվեն ավագանու իրավասու հանձնաժողովներում: Իրավասու հանձնաժողովը ավագանու այն մշտական հանձնաժողովն է, որի իրավասությանն է վերաբերում նիստի օրակարգում ընդգրկվող հարցի քննարկումը:**

- **Համայնքի ղեկավարը, նրա առաջին տեղակալը, ինչպես նաև Ավագանու յուրաքանչյուր անդամ իրավունք ունեն մասնակցելու մշտական հանձնաժողովների ցանկացած նիստի, քննարկվող հարցի վերաբերյալ հարցեր տալ, ներկայացնել առաջարկություններ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:**

- **Ավագանու նիստում յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը այդ հարցի վերաբերյալ ներկայացնում է հանձնաժողովի ընդունած եզրակացությունը (կարծիքը):**

- **Հանձնաժողովների նախագահները համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին գրավոր տեղեկանքներ են ներկայացնում՝ հանձնաժողովի նիստերից հանձնաժողովի անդամների բացակայությունների մասին:**

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԼԻՆԵԼ

- **Ավագանու հերթական նիստից առնվազն 7 օր առաջ համայնքի ղեկավարը իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին պատշաճ կարգով չի տրամադրում ավագանու նիստի օրակարգում ընդգրկված հարցերի փաթեթը:**

- **Համայնքի ղեկավարը ավագանու մշտական հանձնաժողովի գործունեության համար չի ապահովում պատշաճ պայմաններ, նիստերի անցկացման համար տարածք և անհրաժեշտ նյութեր:**

- **Համայնքի ղեկավարը առանց հիմնավորման մերժում է (կամ թողնում է առանց արձագանքի) մշտական հանձնաժողովի նախագահի դիմումը, որով խնդրում է տրամադրել աշխատակազմի համապատասխան մասնագետ՝ հանձնաժողովի նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ մասնագիտական աջակցություն ցուցաբերելու համար:**

- **Ավագանու նիստում օրակարգային հարցերի քննարկման ժամանակ հիմնական զեկուցողից հետո համայնքի ղեկավարը չի հրապարակում այդ հարցի վերաբերյալ իրավասու մշտական հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունը և ձայն չի տալիս հանձնաժողովի նախագահին՝ քննարկվող հարցի վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը ներկայացնելու համար:**

Թեմա 4. Ավագանու խմբակցությունների ձևավորման և գործունեության առանձնահատկությունները

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

- Համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու խմբակցություններն օրենքի ուժով ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստում:
- Խմբակցությունների գործունեությունը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, ավագանու կանոնակարգով, խմբակցության կանոնադրությամբ և ավագանու որոշումներով:
- Խմբակցությունները ստեղծվում են տվյալ գումարման ավագանու լիազորությունների ժամկետի համար և հանդիսանում են նրա կառուցվածքի մասը:

Համայնքապետարանի նիստերի դահլիճում կամ ավագանու որոշած այլ վայրում համայնքի ղեկավարը խմբակցություններին ապահովում է կահավորված, տեխնիկական և կապի միջոցներով հագեցված առանձին աշխատասենյակներով:

Խմբակցության ղեկավարը նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո նրան է ներկայացնում խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որոնք համանքի ղեկավարը կամ ավագանու նիստը վարողը հրապարակում է ավագանու առաջիկա նիստում:

- **Ավագանու անդամը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին և համայնքի ղեկավարին: Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից:**

- Խմբակցության ղեկավարի և քարտուղարի փոփոխության, խմբակցության կազմի փոփոխության, ինչպես նաև գործունեության դադարման մասին խմբակցության ղեկավարը գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը կամ ավագանու նիստը վարողը այդ մասին հայտարարում է ավագանու առաջիկա նիստում:

Հետաքրքիր է իմանալ, որ ...

Ավագանու խմբակցության փորձագետի պաշտոնը
համայնքային հայեցողական պաշտոն է:

Կարևոր է հիշել ...

Մինչև յոթ անդամ ունեցող ավագանու խմբակցությունն իր հայեցողությամբ կարող է ունենալ **մեկ գործավար**,
յոթից ավելի անդամ ունեցող խմբակցությունը՝ **մեկ գործավար և մեկ փորձագետ**,
որոնք աշխատանքի են ընդունվում ժամկետային պայմանագրով՝ համապատասխան խմբակցության ղեկավարի ներկայացմամբ, կատարում են նրա հանձնարարությունները, աջակցում են խմբակցության և դրա անդամների աշխատանքին, ինչպես նաև ավագանու այն մշտական հանձնաժողովի աշխատանքներին, որի նախագահ է ընտրվել տվյալ խմբակցության անդամը:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Խմբակցության փորձագետի և գործավարի շխատանքային ռեժիմի, ինչպես նաև աշխատանքային կարգապահության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են աշխատակազմի
կարգապահական ներքին կանոններով:

Թեմա 5. Ավագանու անդամի իրավունքները և պարտականությունները

Ավագանու անդամի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով և ավագանու կանոնակարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

- առաջարկություններ ներկայացնելու ավագանու նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.
- նախապատրաստելու և ավագանու քննարկմանը ներկայացնելու հարցեր, որոշումների նախագծեր.
- համայնքի ղեկավարից պահանջելու և ստանալու նրա, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև համայնքի բնակավայրերին վերաբերվող տեղեկություններ.
- կատարելու համայնքի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ.
- ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները կամ գործողությունները բողոքարկելու դատարան, եթե խախտվել են նրա՝ որպես ավագանու անդամի իրավունքները.
- վարչական ղեկավարից պահանջելու և ստանալու նրա գործունեության վերաբերյալ տեղեկություններ.

Կարևոր է հիշել, որ ...

Ավագանու անդամն իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց, իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ, կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ ՀՀ ԱԺ պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների ընդունելության, ինչպես նաև հանրային հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար **յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր** կահավորված սենյակ կամ դահլիճ է հատկացնում ավագանու անդամին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

- իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով.
- մասնակցել ավագանու նիստերին և քվեարկություններին.
- պարբերաբար հանդիպել բնակչության հետ, նրանց տեղեկացնել ավագանու աշխատանքների մասին.
- մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին.
- անդամակցել ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին.

- օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.
- հեռավար եղանակով անցկացվող Ավագանու նիստի տեսաձայնագրման ընթացքում բանավոր արտահայտել իր դիրքորոշումը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով հաստատել այն.
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված շահերի բախման իրավիճակում չմասնակցել ավագանու որոշումների քվեարկությանը և այդ մասին գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին.
- անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել համայնքի ղեկավարին.
- ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը:

Կարևոր է հիշել, որ ...

Ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

- զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և ղեկավար պաշտոն՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում.
- լինել համայնքի բնակավայրի վարչական ղեկավար.
- աշխատել իրավապահ, ազգային անվտանգության և դատական մարմիններում:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Ավագանու նիստերից կամ քվեարկությունից բացակայության պատճառի մասին ավագանու կանոնակարգով սահմանված կարգով ավագանու անդամի կողմից աշխատակազմի քարտուղարին չտեղեկացնելու դեպքում բացակայությունը համարվում է անհարգելի, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հետագայում հիմնավորում է իր բացակայությունների հարգելի լինելու հանգամանքները:

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ՈՐՈՆՑ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ ԵՆ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եթե՝

- դադարել են ավագանու լիազորությունները.
- նա կորցրել է ավագանու ընտրական իրավունքը.
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.
- նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել.
- նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել համայնքի ղեկավարին.
- նա հրաժարական է տվել:

Թեմա 6. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման իրավական հիմքերը և մեխանիզմները

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ	
ՀՈԴՎԱԾ 8	Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականության, հրապարակայնության ու թափանցիկության **ՍԿԶԲՈՒՆՔԸ**
ՀՈԴՎԱԾ 11	Համայնքը, անկախ բնակչության քանակից, պետք է ունենա **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ ԿԱՅՔ,** որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը

Կարևոր է հիշել, որ ...

Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել բնակիչների ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Ավագանու հրապարակային նիստերն

առցանց հեռարձակվում են

համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

Հանրության տեղեկացումը ավագանու հերթական նիստերի մասին

Ավագանու հերթական նիստից առնվազն **մեկ շաբաթ առաջ** համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվում են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվում զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվում համայնքի պաշտոնական համացանցային կայքում և հրապարակային ծանուցումների **www.Azdarar.am** կայքում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ
Ավագանու անդամներին տրամադրված՝ նիստին առնչվող փաստաթղթերը, եթե դրանք քննարկվելու են հրապարակային նիստում, պետք է տեղադրված լինեն համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ:
Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջելու և օրենքով սահմանված կարգով ստանալու ավագանու նիստի հետ կապված փաստաթղթերն ու տեղեկությունը:
Ավագանու նիստը հրապարակային է: Ավագանու կանոնակարգով նախատեսված դեպքերում ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ նիստեր և քննարկումներ:
Ավագանու նիստերն արձանագրվում են: Ավագանու նիստերի արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ

Ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը ավագանու, իր գործունեության և համայնքի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

Այդ հաշվետվությունները տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ ԵՆ

- Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը
- Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը
- Համայնքի տարեկան բյուջեն

.....

Համայնքի բնակչության համար առավել մատչելի դարձնելու համար պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական ու գրաֆիկական տվյալներ պարունակող

տեղեկատուներ և գրքույկներ:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրապարակումը:

Կարևոր է հիշել, որ ...

Ավագանու ընդունած նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման:

Հանրային քննարկումը իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց է:

****

Հանրային քննարկումը պարտադիր իրականացվում է քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) հրապարակման եղանակով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Վարժություն 1.

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.

Վարժություն 2.

Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում /որոնում/

Վարժություն 3.

Ավագանու անդամի իրավունքները և պարտականությունները

/համեմատական սխեմա/

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ